



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ �ԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ



Հետազոտության թեմա՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական
նշանակությունը

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիամ Թորոսյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ
Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----- 3

Գլուխ 1. Առակի ծագումնաբանություն ----- 5

Գլուխ 2. Ի՞նչ է առակը ----- 6

Գլուխ 3. Կառուցվածք ----- 8

Գլուխ 4. Նկարագրություն ----- 9

Սովորողների համակողմանի զարգացումը առակների միջոցով ----- 9

Անձ-քաղաքացու արժեքային համակարգի, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը առակների միջոցով ----- 10

Գլուխ 5. Դաս-գիտափորձ ----- 11

Առակի ուսուցման կարևոր հանգամանքներ ----- 12

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը ----- 14

Գլուխ 6. Հայրենի այբուբեն ----- 14

Գլուխ 7. Սողոմոնի առակների սկիզբը ----- 15

Առակագրությունը որպես ժանր ----- 22

Գլուխ 8. Հոգևորականներ ----- 23

Առակների խրատական, դաստիարակչական նշանակությունը անձի զարգացման գործում ----- 24

Եզրակացություն ----- 27

Գրականության ցանկ----- 28

Հավելվածներ ----- 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հետազոտական աշխատանքում անդրադարձ եմ կատարել դպրոցականների դաստիարակության և կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների համատեքստում առակների ուսուցման առանցքային նշանակությանը:

Անձն իր ձևավորման և սոցիալականացման գործընթացում անընդհատ գտնվում է շրջակա միջավայրի հետ մշտական շփման և փոխազդեցության մեջ: Վերջինիս անընդհատ փոփոխությամբ պայմանավորված՝ ծագում են նորանոր խնդիրներ, պահանջմունքներ, հակասություններ: Եվ ստացվում է այնպես, որ մեր կյանքը կարգավորվում է հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքով, որի մեջ ծանրակշիռ դեր ունեն բարոյական արժեքներն ու չափորոշիչները, աշխարհընկալման և մտածելակերպի առանձնահատկությունները: Այս ամենի հիմքը դրվում է դեռ մանկական տարիքում և զարգանում հետագայում դպրոցում՝ ուսումնառության ընթացքում:

Ուսուցման զարգացնող գործառույթի բովանդակությունը անձի մտավոր զարգացումն է, իմացական որակների զարգացումն ու ձևավորումը: Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում գիտելիքների ձեռք բերման ընթացքում, սակայն զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է ոչ թե գիտելիքների գումարով, չափով, այլ ուսուցման գործընթացի կառուցվածքով և առանձնահատկություններով:

Տարրական դասարաններում երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը և ինչը գրված է գրքերում: Այն բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում և դպրոցում, դառնում են բարոյական համոզմունքներ, որոնք հետագայում ձևավորում են որոշակի վերաբերմունքի և ուրիշների նկատմամբ:

Առակների ուսուցումը սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնական միջոցներից է և տարրական դասարաններում այն համարվում է աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկը: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ժամանակակից դպրոցի առջև դրված արդիական խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում տարրական դասարաններում առակների կազմակերպման մեթոդիկայի, ընթերցանության անցկացման տեխնոլոգիաների, տարրական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ներարկման, դաստիարակության խնդիրները:

Օրինակ՝ զարգացնող ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումների, շարժողական, մտավոր, ինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների զարգացումը:

Հենց այդպիսին է նաև առակների ուսուցման գործընթացը, որն իրենից ներկայացնում է համագործակցային ուսուցում և պահանջում է ուսուցման հնարավորինս ճիշտ և հստակ կազմակերպում:

Մանկավարժության մեջ ուսուցման գործընթացի կառուցվածքի վերաբերյալ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Ուսուցման նոր՝ ճանաչողական գործունեության վրա հիմնված ուսուցման կառուցվածք է առաջարկում ամերիկացի մանկավարժ և հոգեբան Բենջամեն Բլումը: Ըստ նրա ուսուցման թաքսոնոմիայի (համակարգի)՝ ուսուցման գործընթացին հատուկ են 6 հիմնական աստիճաններ՝

- ✚ գիտելիք,
- ✚ իմաստավորում,
- ✚ կիրառում,
- ✚ վերլուծություն,
- ✚ համադրում,
- ✚ կշռադատում կամ գնահատում:

Ավարտական աշխատանքի նպատակն է՝

- տեսականորեն ուսումնասիրել տարրական դպրոցում առակների ուսուցման նպատակներն ու խնդիրները /մեթոդիկան/ ցույց տալ դրանց դերն ու նշանակությունը անձի զարգացման և կայացման հետագա գործընթացում,
- ուսումնասիրել, թե ինչպե՞ս են դասավանդվում Աստվածաշնչյան առակները և ինչ դաստիարակչական ազդեցություն են թողնում ընթերցողի, ունկնդրի վրա, ի՞նչ դեր ունեն դրանք սովորողի ուսումնական գործընթացի զարգացման և գիտելիքների ձևավորման վրա,
- բացահայտել տարրական դասարաններում առակների ազդեցությունը երեխաների անձի ձևավորման և սոցիալականացման գործընթացում:

Աշխատանքի խնդիրներն են՝

ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ գիտական գրականությունը, տեսական դրույթներն ու հայեցակարգային մոտեցումները, հիմնավորել միջառարկայական կապերի դերը կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման գործում՝ հենվելով մանկավարժական փորձի և թեմայի վերաբերյալ տեսակետների, կարծիքների գիտական մոտեցումների վրա՝ առաջադրել կրտսեր դպրոցականների դաստիարակության արդյունավետ ձևեր և միջոցներ:

Յետազոտման օբյեկտը և առարկան: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունն է դպրոցականների շրջանում, առարկան՝ առակների ուսուցման ձևերն ու մեթոդները:

Օգտագործված գրականության տեսություն: Յետազոտական աշխատանքը շարադրված է հայերեն աղբյուրների և ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 8 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Յարգադրում.

- ✚ Նպաստո՞ւմ է արդյոք առակների ուսուցումը կրտսեր դպրոցականների դաստիարակության, անձի ձևավորման, ուսումնական գործընթացի զարգացման և գիտելիքների ձևավորման վրա:
- ✚ Որքանո՞վ է առակների ուսուցումը հնարավորություն տալիս ուսուցչին լուծելու անձի կայացման և հետագա զարգացման գործընթացում դաստիարակության խնդիրները:

Գլուխ 1. ԱՌԱԿԻ ՃԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առակը (առ՝ ակն, աչքի առաջ) բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործությունն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները:

Առակը չափածո կամ արձակ փոքրածավալ ստեղծագործությունն է, որն ունի այլաբանական իմաստ և բարոյախրատական բովանդակություն:

Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն:

Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և

այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո:

Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մուլա Նասրեդինի առակները:

Հայ գրականության մեջ առակագրությունը սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով, դրանք ամփոփվել են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում, որոնք հունարենից թարգմանվել են V–VI դարերում, այլ տվյալով՝ VII դարում: XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը:

12-13-րդ դարերում արդեն հանդես են եկել հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին: Նրանց առակները մեծ ժողովրդականություն են վայելել:

Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է (Նկարահանվել է մուլտֆիլմ, 1975 թ., Հայֆիլմ): «Աղվեսագրքի» առակներից են՝ «Իմաստուն գինվորը», «Եզն ու ձի», «Ջրաղաց և եկեղեցի», «Կտակ վասն գանձի», «Առյուծը, գայլը և աղվեսը», «Իմաստունն ու իշխանավորը», «Գինու վնասը», «Տգեղ կինը», «Թագավորն ու ծերունին», «Թագավորն ու նրա ուսուցիչը», «Էշին թոռ ծնվեց», «Իմաստուն դատավորը» առակները:

Ահա այս առակների ուսուցման ժամանակ ևս հարկավոր է հստակ տարանջատել բարին չարից, գեղեցիկը տգեղից և կարևորը անկարևորից:

Գործողությունն ուժեղ է առասպելական և ստեղծական կոչված առակներում, որոնց նյութը քաղված է կենդանիների ու մարդկանց կյանքից: Բոլոր դեպքերում պատմվածքի մասը ծավալուն չէ: Առասպելական, մասամբ և ստեղծական առակներում Մ. Գոշը վերցրել է այնպիսի գործող անձինք, որոնց սոսկ անունները պատրաստի հասկացություններ են. աղվես՝ խորամանկություն, նապաստակ՝ վախկոտություն, արջ՝ միամտություն, հիմարություն և այլն: Նրա առակների ժողովածուն առաջին արձակ ստեղծագործությունն է հայ գրականության մեջ, որ գրված է իբրև գրական-գեղարվեստական երկ: Այս իմաստով Մ. Գոշը գեղարվեստական արձակի հիմնադիրն է հայ գրականության մեջ: Մխիթար Գոշն

առակների մեջ տեսնում է բնականաբար 2 մաս՝ բուն պատմվածքը և խրատական եզրակացությունը:

Պատմվածքը, որ նա շեշտում է առակ, գաղափար, օրինակ, եղանակ և այլ բառերով, ըստ Գոշի լինում է 3 տեսակի՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են: Խրատական եզրակացությունը, որը հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն և այլ բառերով, 2 տեսակի է: «Ճշմարտությունը առակների հեղինակի համար երկու բովանդակություն կարող է ունենալ, երկու եռություն՝ աշխարհական և եկեղեցական, ըստ որում նրա նպատակն է «կերպարանել»՝ պատկերացում տալ,

բացահայտել, ցուցադրել, արտացոլել այդ երկու ճշմարտություններն այլաբանորեն: Դատաստանագրքում հեղինակը ձգտել է նույն նպատակին հասնել՝ ճշմարտությունը (դարձյալ՝ եկեղեցական և աշխարհական) պարզել օրենսդրական միջոցներով՝ կազմելով դրա համար 2 տիպի օրենքներ»: Եվ քանի որ առակագրի համար էականը «ճշմարտությունն» է, ուստի առակի առասպելն այնպես է հորինվում, որ հարմարվի բարոյակրթական մասին կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ավելի մեծ տեղ է բռնում, քան պատմվածքը: Այսինքն՝ նպատակը ուսուցողական է: Կարևորը և գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում և հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու գրույցներ: Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաև աշխարհականների համար և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով:

Առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվել է, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակում են մնալ որպես գրական տեսակ: Լավագույնները այն առակներն են, որոնք առակագրքերի մեջ են մտել ժողովրդական բանահյուսությունից: Դրանց պատմողական մասը առավելագույն չափով հակիրճ է, ամփոփ ու հստակ և լիովին հաղորդում է առակախոսի միտքը, միտումը, հուշում գաղափարը, այնպես որ, ավելորդ է դառնում մեկնությունը: Եվ իրոք, ժողովածուների առակներից շատերը մեկնողական մաս չունեն և դրանց կարիքը չի էլ զգացվում:

Գլուխ 2. Ի՞նչ է առակը

Առակը ուսուցողական, բարոյախրատական, դաստիարակչական բնույթի փոքրածավալ գրական-գեղարվեստական ստեղծագործություն է: Այն ունի բազմադարյան պատմություն:

Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Այն այլաբանական բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է,

որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են:

Նրանց փոխհարաբերություններն այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքի զանազան խրատական, հաճախ երգիծական բովանդակություն: Մեծ դժվարությամբ է առակի տեսակը մուտք գործել գրավոր գրականության մեջ:

Առակի վարպետներ են Եզոպոսը, Ֆեդրոսը, Ժան դը Լաֆոնտենը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Աթաբեկ Խնկոյանը (Խնկո Ապեր), Մկրտիչ Կորյունը: Սակայն առակների ամենահին հեղինակը հույն Եզոպոսն էր՝ տգեղ կերպարանքով, չափազանց իմաստուն մի ստրուկ:

Եզոպոսը եղել է աշխարհի առաջին առակագիրը: Նա ապրել է մ. թ. ա. 6-րդ դարում: Մեզ հասած եզոպոսյան առակների հիմնական ժողովածուն (500-ից ավելի առակներ) կազմվել է I-II դարերում: Հետագա դարաշրջանների առակագիրները (օրինակ՝ ֆրանսիացի Ժան դը Լաֆոնտենը, ռուս՝ Իվան Կռիլովը և ուրիշներ) օգտվել են Եզոպոսի առակների սյուժեներից և փոխադրել դրանք:

Հին Հունաստանում ծագել է «եզոպոսյան լեզու» արտահայտությունը, երբ թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում մտքերը Եզոպոսի նման արտահայտում են քողարկված, փոխաբերական արտահայտություններով: Հայ գրականության մեջ եզոպոսյան լեզուն վարպետորեն օգտագործել է առակագիր Վարդան Այգեկցին: V դարում հայերն արդեն ծանոթ էին եզոպոսյան առակներին: Դրանք հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս են տեսել 1818 թ.-ին Վենետիկում:

Եզոպոսի մասին շատ քիչ բան է հայտնի, բայց փոխարենը պահպանվել են շատ գրույցներ և ավանդություններ նրա մասին: Նա եղել է հույն փիլիսոփա Քսանթոսի ստրուկը: Ասում են նույնիսկ, թե Եզոպոսն այնքան աղքատ էր, որ հենց ինքն էլ վաճառել է իրեն ստրկության, որպեսզի կարողանա վճարել պարտքերը: Լեգենդը պատմում է, թե ինչպես Քսանթոսը գնեց Եզոպոսին:

Մի անգամ շուկայում նա տեսավ 3 ստրուկ, որոնք վաճառքի էին հանված. 2-ը գեղեցիկ էին, իսկ 3-րդը՝ Եզոպոսն էր: Քսանթոսը հարցրեց ստրուկներին.

- *Ի՞նչ եք կարողանում անել:*
- Ամեն ինչ, - պատասխանեց առաջինը:
- Ամեն ինչ, - պատասխանեց երկրորդը:
- Ոչինչ, - պատասխանեց Եզոպոսը:
- *Այդ ինչպե՞ս, - զարմացավ Քսանթոսը:*
- Իմ ընկերներն արդեն ամեն ինչ կարողանում են, ինձ ոչինչ չթողեցին, - պատասխանեց Եզոպոսը:
- *Ուզո՞ւմ ես՝ գնեմ քեզ:*
- Զեզ միևնույն չէ՞, թե ինչ եմ ուզում: Ինձ քո խորհրդականը դարձրու, հետո կհարցնես:
- *Դու մի՞շտ ես այդքան գրուցատեր:*
- Խոսող թռչունների համար ավելի շատ են վճարում:
- *Սակայն դու թռչուն չես, այլ անճոռնի:*
- Նկուղում գտնվող արկղերը նույնպես անճոռնի են, սակայն դրանց մեջ եղած գինին անգին է:

Քսանթոսը զարմացավ ու գնեց Եզոպոսին: Հետագայում էլ Եզոպոսը չղաղարեց զարմացնել իր տիրոջը:

Ուսուցումը նպատակային գործընթաց է, որը իրենից ներկայացնում է բավականին բարդ և խրթին գործընթաց: Ուսուցման սկզբունքները այն ելակետային

հիմքերը, կանոնը կամ պահանջը, դեկլարավոր գաղափարներն են, որոնց միջոցով ապահովվում է ուսուցման արդյունավետությունը:

Այս առումով պետք է նշել, որ ուսուցումը՝ լինելով բարդ գործընթաց, պահանջում է աշխատանք և ճիշտ մոտեցում գործընթացի իրականացման համար: Ուսուցման գործընթացն իմացական գործունեության յուրահատուկ ձև է, քանի որ սովորողը ուսուցման միջոցով յուրացնում է հասարակական փորձը, ճանաչում է աշխարհը: Ուսուցման տարբերությունը գիտական իմացությունից նրանում է, որ նյութը, որն արդեն յուրացված է գիտության կողմից՝ հատուկ կազմակերպված է և ներկայացված է ուսուցման համար:

Առակագիրները շոշափում են խնդիրներ, որոնցով նրանց ժողովածուները առանձին կարևորություն են ստանում ժամանակի սոցիալ-պատմական իրադրությունների պարզաբանման համար: Բնականաբար, այս ամենը ուսուցանելիս, հարկավոր է, որ ուսուցիչը հնարավորինս մատչելի կերպով մատուցի, որպեսզի սովորողները ընկալեն դրանց իմաստն այնպիսին, ինչպիսին դրանք իրականում կան:

Մի շարք առակներում երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը: Մարդիկ դատում ու դատապարտում են իշխաններին, տրտնջում թագավորներից, նույնիսկ՝ Աստծուց: Սակայն մի շարք հեղինակների կարծիքով, ժողովուրդը պետք է հնազանդվի իշխողներին, իսկ վերջիններս պարտավոր են նրան պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգից: Առակներում ևս արծածվում է կենտրոնացած ուժեղ պետականության գաղափարը: Այստեղ այլաբանորեն կոնկրետ մարդն է նկարագրվում՝ իբրև գյուղացի, քաղաքացի, ազնվական, իշխան, արհեստավոր, կրոնավոր, թագավոր և այլն՝ իր կեցության առանձնահատկություններով:

Գլուխ 3. Կառուցվածք

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը:

Հայկական առակների առաջին, ըստ ամենայնի համակարգված ժողովածուն կազմել է Մխիթար Գոշը մեզանից ավելի քան ութ դար առաջ իր հյուսած պատումները համախմբելով երկու բաժնում. «Առակք առասպելականք և բարոյականք» և «Առակք ստեղծականք»: Գրական այս տեսակի օգտագործման ոլորտներից, հատկանիշներից ու դասակարգման սկզբունքներից բխող հայեցողություններին, որոնք ընտանի էին միջնադարյան Հայաստանում և որոնցով առաջնորդվում էր Մխիթար Գոշը, մինչ դասակարգում էր առակները, հարկավ, նախորդել, ինչպես նաև հաջորդել են ինամքով մշակված տեսություններ՝ առավելապես գործնական հողի վրա փոխադրված, որոնց ստեղծագործական յուրացումն ու հետագա զարգացումը մինչև իսկ կարելի է նշմարել 19-րդ դարի կեսերին, Խաչատուր Աբովյանի ստեղծագործական առօրյայում: Սակայն Աբովյանի, ինչպես և ժամանակին, Մխիթար Գոշի, ելակետային դրույթները, որպես տեսական շարադրանք, մեզ մատչելի չեն և բխեցվել են իրենց իսկ գործնական (ստեղծա-

գործական) աշխատանքի արդյունքներից: Եթե Մխիթար Գոշն, այնուամենայնիվ, ժխատ խոսքերով բացատրել է Առակագրքի տերմիններից մի քանիսը, Աբովյանը այդ էլ չի արել, նա առիթը չի օգտագործել կամ չի էլ մտածել, գեթ համառոտակի,

ընթերցողի հետ կիսելու իր հայեցակետերն ինչպես ընդհանրապես առակների, այնպես էլ «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի մեջ և «նախաշավիղ կրթության» ուսումնական ձեռնարկի զույգ տարբերակներում համախմբված ինքնուրույն ու թարգմանական նմանատիպ երկերի ժանրային յուրահատկությունների մասին:

Գլուխ 4. Նկարագրություն

Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Այդ իսկ պատճառով առակների ուսուցումը բավականին կարևոր է գիտելիք փոխանցելու տեսանկյունից:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մուլա Նասրեդինի առակները:

Սովորողների համակողմանի զարգացումը առակների միջոցով

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեքանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում: Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության, դաստիարակության դարբնոց, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով:

Մտորել – գնահատել – իմաստավորել - յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեք կրթական արժևորման աստիճանակարգում:

Անձի կրթվածությունն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում,

համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության ու վարքի մեջ որոշակի ուղղվածություն է դեպի այս կամ այն արժեքը, որը բացահայտում է անձի նպատակները:

Արժեքները մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչներն են: Արժեքային դիրքորոշումը սովորողի կողմից իր ներքին կողմնորոշման գիտակցումն ու գործունեության պատրաստակամությունն է՝ որոշակի արժեքներին համապատասխան:

Արժեքային հարաբերությունը արժեքային անհատական գիտակցության կապն է հասարակականի հետ, անձնային-ապրումային վերաբերմունքը, կապը շրջապատող առարկաների, երևույթների հետ:

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում:

Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են՝ ըստ ուսումնական բնագավառների ու հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

Անձ-քաղաքացու արժեքային համակարգի, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը առակների միջոցով

Առակները նպաստում են ձևավորել անձ և քաղաքացի հետևյալ որակներով՝

- ✚ հայրենասեր
- ✚ ազգասեր
- ✚ աշխատասեր
- ✚ բարոյական
- ✚ ազնիվ
- ✚ արդարամիտ
- ✚ ընկերասեր
- ✚ ծնողասեր
- ✚ մարդասեր
- ✚ հանդուրժող
- ✚ քաղաքակիրթ
- ✚ բարեկիրթ և այլն:

Անձ-քաղաքացու ձևավորման համար վերոնշյալ որակները համամարդկային են և տարիքային սահմանափակում չեն ճանաչում: Ըստ դիդակտիկայի փոխհաջորդելիության սկզբունքի՝ ուսուցման եռաստիճան համակարգում՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում, ենթադրվում է անընդմիջելի կապ՝ գիտելիքների և դրանց միջոցով արժեհամակարգի ձևավորման առումով: Միջին դպրոցում մի սովոր բաժին հատկացված է առակներին:

Առակները ծնունդ են առել կենդանական հեքիաթներից և այլաբանորեն են ներկայացնում իրական կյանքն ու մարդկանց: Դրանք սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար անփոխարինելի միջոց են: Փոխհաջորդելիության սկզբունքի համաձայն՝ առակների այլաբանական սկզբունքի բացահայտումն է դառնում այն սկզբնահիմքը, որի վրա էլ կառուցվում է ավագ դպրոցի «Ոճաբանություն» դասընթացում ընդգրկված պատկերավորման միջոցներից այլաբանության /դարձույթ/ ուսումնասիրումը:

Գլուխ 5 .Դաս-գիտափորձ

Ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերից մեկն էլ կրկնության դասն է, որը հնարավորություն է տալիս համակողմանիորեն դիտարկելու լայն թեման, իմ ուսումնասիրության դեպքում՝ արժեհամակարգի տեսանկյունից: Թեմայի ընձեռած հնարավորության սահմաններում մտորելու, գնահատելու, իմաստավորելու, յուրացնելու, արժևորելու տրամաբանական քայլերը հանգեցնում են արժեքային գիտակցության: Այսօր դասագրքում առաջարկվող տարաբնույթ առակների մեջ կան աստվածաշնչյան առակներ, որոնց դաստիարակչական արժեքը դժվար է գերազնահատել: Այս գիտակցությամբ էլ, ըստ իս, նպատակահարմար է կատարել դաս-գիտափորձ՝ առակների ուսուցման շրջանակում կարևորելով ընկերասիրությունը որպես սոցիալական արժեքի տարր: Կրկնության դասը կարելի է կազմակերպել նաև բաց դասի ձևով՝ տեսասահիկային ներկայացմամբ. այս դեպքում կունենանք հետևյալ քայլաշարը:

Դաս-գիտափորձի համար ընտրել դասարանը, համակազմը, տարանջատել աշակերտներին ըստ սեռի (տղա, աղջիկ), ըստ ուսումնառության մակարդակի (գերազանց, միջին, լավ):

Քայլաշար

ՔԱՅԼ 1

«Նախնական կազմակերպիչ» մեթոդի միջոցով կազմակերպել ճեպահարցում ընկերասիրության վերաբերյալ, որի համար սահմանել որոշակի ժամանակ:

Բլից-հարցեր՝

- ❖ Ո՞վ է քո ընկերը, ինչո՞ւ է հենց նա քո ընկերը:
- ❖ Զանի՞ ընկեր ունես:
- ❖ Ի՞նչ կանես ընկերոջդ համար:
- ❖ Ինչպե՞ս ես ընտրում ընկերոջդ:
 - ա)** քո ցանկությամբ, **բ)** ծնողների միջամտությամբ, **գ)** ուսուցչի կողմնորոշումով:
- ❖ Ո՞ր հատկանիշն ես կարևորում ընկերոջդ մեջ:

Կվերլուծեմ և կքննարկեմ ստացված արդյունքները: Փորձը ցույց կտա սովորողների հետաքրքրությունների շրջանակը առակների նկատմամբ:

Առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի, տարբեր առարկաների ու բնության երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ՝ իրենց դրական ու բացասական գծերով: Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում: Նա արդարացիորեն դիտարկում և վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ազահիությունը, ժխտությունը և այլն:

Եզրպոսի, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու /ռուս իրականության մեջ՝ Կռիլով, .../ առակները, որոնք ներառված են դասագրքերում, սովորողին դաստիարակելու, կրթելու մեծ հնարավորություն են տալիս:

Անձի դրական հատկանիշների գնահատումը, արժևորումը բացահայտվում է այն բարոյախոսությամբ, որ փոխանցվում է առակի միջոցով: Ի լրումն այս ամենի՝ հոգևոր, բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Ջիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Ջիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր է <<Մանկական աստվածաշունչը>>: Ջիսուսը առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝ բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով:

Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ անդրադառնալու Ջիսուսի առակներին և դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորելու նոր արժեքներ: Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է ուսուցչի կողմից հստակ մեկնաբանվի յուրաքանչյուր միտքը իր արտահայտած իմաստով, քանզի այն կարող է երբեմն ստանալ ոչ ճիշտ ընկալում, քանի որ առակն ինքնին խոհախրատական և փիլիսոփայական միտք է իրենից ենթադրում:

Առակի ուսուցման կարևոր հանգամանքներ

Առակի ուսուցման ժամանակ հարկավոր է հաշվի առնել մի շարք կարևոր հանգամանքներ: Ուսուցիչը հստակ կերպով պետք է կարողանա տարանջատի հետևյալները.

Նպատակը՝ սովորողն ընկալի առակի իմաստը, բարոյախոսությունը, տարբերի նրան բնորոշ լեզվաոճական հնարները, տեսնի առակի կարևոր առանձնահատկությունը՝ դաստիարակիչ նշանակությունը, հասկանա խոսքի տրամաբանությունը, կարողանա վերաբերմունք արտահայտել:

Ուսումնական նյութը - առակը կազմող նախադասություններ՝ գրված առանձին թերթիկների վրա (օրինակներ անտիկ, հայ միջնադարյան և ժամանակակից առակներից):

Առաջադրանքներ՝ Վերականգնել առակը:

- ✓ Գրել առակի իմաստը (ի՞նչ է սովորեցնում):
- ✓ Գրել առակի իմաստին համապատասխան առաձևեր:
- ✓ Ջերոսներից մեկի անունից պատմել առակը:
- ✓ Նկարագարդել:
- ✓ Սցենար գրել և բեմադրել:
- ✓ Յուրաքանչյուր խմբի տրվում է մեկ «խառնած» առակ և բոլոր առաջադրանքները:
- ✓ Առաջին և վերջին առաջադրանքի կատարմանը մասնակցում է ամբողջ խումբը, իսկ մյուսները խմբի ներսում բաժանվում են, կատարումը քննարկում են և ներկայացնում միասին:

Ամփոփում՝ Ի՞նչ է առակը (մեթոդը՝ «ձևակույտ» կամ ԳՈՒՍ):

Աշխատանքը ներկայացնելուց հետո գնահատվում է 2 փուլով:

I փուլ- կիրառել անհատաբար լրացվող ինքնագնահատման թերթիկներ: Առավելագույնը 5 միավորով երեխաները գնահատեն իրենց:

Աշխատանքը՝ ըստ յուրաքանչյուր չափորոշիչի:

1. Աշխատել եմ խմբի հետ:
2. Չեմ շեղվել առաջադրանքը կատարելիս:
3. Չգալի ներդրում եմ կատարել:
4. Մյուսներին աշխատելու և արտահայտվելու հնարավորություն եմ ընձեռել:
5. Օգնել եմ ընկերներին:

II փուլ- խմբերի փոխգնահատում:

Խմբերի գնահատման չափանիշներ (առավելագույնը՝ 5 միավոր).

1. խոսքի հստակ ձևակերպում,
2. տրամաբանական և ստեղծագործական մտեցում,
3. ներկայացում,
4. լսարանին ակտիվ պահելը,
5. իրար լսելը,
6. ակտիվությունը:

Դասի վերջում կատարել անդրադարձ:

Ուսումնական նյութի և այսպես կառուցված դասի առավելությունները սովորողների մոտ կգարգացնեն համագործակցային կարողություններ և հմտություններ, իսկան կհանդիսանան տրամաբանական և ստեղծագործական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, կձևավորեն ուրիշների կարծիքը լսելու և հաշվի առնելու ունակություն, կխորացնեն ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունների իմացությունը և կզարգացնեն տարբերակման կարողությունը:

Իմ կարծիքով նման ձևով կառուցված դասը կլինի արդյունավետ և հաջողված, որովհետև թե՛ աշակերտը, թե՛ ուսուցիչը հստակ կիմանան իրենց անելիքը. ով ի՞նչ է անում, ի՞նչ արդյունք է ակնկալում, ինչպե՞ս է անում, որ հասնի ցանկալի արդյունքի:

Աշակերտների տպավորությունների ակնկալվող արդյունքը՝

- Ինձ դուր է գալիս խմբով աշխատելը:
- Հետաքրքիր է:
- Խառնած առակը հետաքրքիր է նրանով, որ սկսում ենք մտածել, թե ինչպես վերականգնենք, որպեսզի պարզենք, թե վերջում ինչ է ստացվելու:
- Սովորաբար չաշխատողն անգամ հասցնում է ինչ-որ բան սովորել, հասկանալ:
- Մեզ ավելի ինքնավստահ ենք զգում:
- Ինձ դուր է գալիս հատկապես հերոսներից մեկի կողմից ներկայացնելը, մտնում եմ դերի մեջ:
- Անհատականի ժամանակ չենք հասցնում բոլորս արտահայտել մեր մտքերը, իսկ խմբայինի ժամանակ աշխատում, արտահայտվում ենք բոլորս:
- Երբեմն տարածայնությունները (առակի իմաստի առումով) չեն թողնում վերջնական հայտարարի գանք:
- Երբեմն ժամանակը չի հերիքում:
- Երբեմն հայտնաբերվում են «գլուխ պահողներ»:

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

*<<Ճանաչել զիմաստությունը եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>>
(աշխարհաբար՝ ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը)*

Հայոց գրերի գյուտից հետո հայերեն գրված առաջին նախադասությունն է: Այն գրվել է 405 թվականին Մեսրոպ Մաշտոցի կողմից, երբ նա թարգմանում էր Սողոմոնի առակները:

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդը ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում: Պատահական չէ, որ դրանք արժանացել են Խ. Աբովյանի, Ղ. Ավիշանի, Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի և այլ նշանավոր մտավորականների բարձր գնահատականին: Այսպես, Ղ. Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց:

Հայտնի չէ, թե ինչու է Մեսրոպ Մաշտոցը «Աստվածաշնչի» թարգմանությունը սկսել հենց Սողոմոնի առակներից: Դրա վերաբերյալ աղբյուրներից մեկում նշված է. «Առաջին գործը, որով զբաղվում է Մեսրոպն իր երկու աշակերտների հետ այբուբենը գտնելուց հետո, եղել է «Աստվածաշնչի» թարգմանությունը, որը և, մեզ համար անհայտ պատճառով, նա սկսել է «Առակների գրքից»: Մեկ այլ նշանավոր հայագետ՝ Ֆրեդերիկ Կոնիբերը նշել է. «...թերևս հասարակ պատահմունք է այն, որ Մեսրոպը, թողնելով «Աստվածաշնչի» ավելի կարևոր գրքերը, իր գործն սկսել է նվազ կարևորից»: Նա հնարավոր է համարել նաև, որ «Աստվածաշնչի» թարգմանությունը հայերեն այբուբենը գտնելուց հետո նրա ձեռքն է ընկել «Աստվածաշնչի» երկհատոր ձեռագրի այն մասը, որը սկսվում էր <<Առակների գրքից>> և դրա համար էլ նա իր թարգմանությունը սկսել է այդտեղից»:

Հայերենի այբուբեն

Ըստ վերլուծաբան Արամ Ղանալանյանի՝ Մեսրոպ Մաշտոցին մտահոգել է ապագա աշակերտներին մատուցվելիք ընթերցանության նյութը: Նա թարգմանելիք առաջին գրքի նյութի ընտրությունը կատարելիս երկար ժամանակ է հատկացրել այլալեզու բազմաթիվ գրքերին և ի վերջո ընտրել է Սողոմոն արքայի առակների գիրքը: Ըստ Մաշտոցի՝ վերջինս բազմազան էր և ուներ հետաքրքրական բովանդակություն և ապագա աշակերտների համար կարող էր հանդիսանալ նախաշավիղ-ընթերցարան: Ընտրության համար կարևոր է եղել նաև այն փաստը, որ առակներն իրենց մեջ ներառել են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են իմաստությունն ու հանճարը, ծնողների ու զավակների փոխահարաբերությունը, օտարամոլությունն ու հայրենասիրությունը, ջանասիրությունն ու ընչաքաղցությունը, արդարությունն ու խաղաղությունը:

Սակայն Սողոմոնի առակների ընտրությունը չէր հետապնդում միայն մանկավարժական նպատակներ: Այն նաև հասարակ ժողովրդի համար ուներ դաստիարակչական-ուսուցողական նշանակություն: Նախևառաջ թարգմանելով այս գիրքը՝ Մաշտոցը ցանկացել է իր հայրենակիցներին տալ մի գիրք, որն իր ոճով և լեզվով մատչելի կլինի նրանց համար: Այս առակների մեջ Մաշտոցը կարևոր դաստիարակչական նյութ է գտել ոչ միայն մեծերի, այլև մանուկների համար: Քանի որ «Աստվածաշունչն» ունի ավելի կրոնական բնույթ և բովանդակություն, իսկ Սողոմոնի առակներն աչքի են ընկնում իրենց ավելի աշխարհիկ բովանդակությամբ, այդ պատճառով էլ Մաշտոցը նախապատվությունը տվել է վերջինիս:

Հայտնի է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը: Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել կրտսեր դպրոցականների հուզաշխարհի վրա: Այս առումով հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն հեքիաթները, ինչպես նաև առակները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, ինչպես նաև ծուկությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն: Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին: Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:

Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը, ընկալել խօսքի բարդ դարձուածքները, հասկանալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը՝ պարզամիտներին խորագիտութիւն եւ երիտասարդներին միտք ու հանճար տալու համար, որպէսզի, դրանք լսելով, իմաստունն աւելի իմաստուն լինի, իսկ հանճարեղը առաջնորդութիւն ստանայ, թափանցի առակների եւ խորին ասոյթների մէջ, իմաստունների ճառերի եւ նրանց այլաբանութիւնների մէջ: Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, որ բարի հանճար է բոլոր նրանց համար, ովքեր առաջնորդում են նրանով, իսկ զգօնութեան սկիզբը բարի աստուածապաշտութիւնն է, բայց ամբարիշտներն արհամարհում են իմաստութիւնն ու խրատը:

Սողոմոնի առակների սկիզբը

Սողոմոնը պատանի հասակում թագավոր է դառնում: Նա հետևում էր իր հոր՝ Դավթի տված իմաստուն խորհուրդներին: Եհովան հավանում է նրան ու մի գիշեր երազի մեջ հարցնում է. «Սողոմո՛ն, ի՞նչ կուզեիր ինձանից ստանալ»: Ի պատասխան՝ Սողոմոնն ասում է. «Ո՛վ իմ Աստված, ես շատ երիտասարդ եմ ու երկիր կառավարել չգիտեմ: Ուստի, տո՛ւր ինձ իմաստություն, որպեսզի քո ժողովրդին ճիշտ ձևով առաջնորդեմ»: Աստծուն դուր է գալիս Սողոմոնի խնդրանքը:

Հետևաբար, նա ասում է. «Քանի որ դու իմաստություն խնդրեցիր ու ոչ թե երկար կյանք կամ հարստություն, ապա դու կլինես այնքան իմաստուն, որքան աշխարհում դեռ ոչ մի մարդ չի եղել: Բայց դրա հետ մեկտեղ ես քեզ կտամ նաև այն, ինչ որ չխնդրեցիր՝ թե՛ հարստություն և թե՛ փառք»: Երբ Սողոմոնը՝ Դավթի որդին, մ.թ.ա. 1037թ.-ին դարձավ Իսրայելի թագավոր, «երեք հազար առակ գրեց»: Նրա իմաստուն խոսքերի որոշ մասն արձանագրվեց Աստվածաշնչի «Առակներ» գրքում: Այս առակներում հավիտենական ճշմարտություն է ամփոփված: Դրանք այսօր նույնպես ժամանակահարմար են:

Սողոմոնի իշխանության տարիները նպաստավոր ժամանակաշրջան էին: Այդ ժամանակ Իսրայելի թագավորությունն իր ծաղկման գագաթնակետին էր գտնվում: Այնուամենայնիվ, մարդիկ անձնական խնդիրներ ու դժվարություններ ունեին, որոնց պատճառը մարդկային անկատարությունն էր: Ուստի զարմանալի չէ, որ իր խնդիրները լուծելու համար ժողովուրդը դիմում էր իմաստուն Սողոմոն թագավորին: Բազմաթիվ հարցերի առնչությամբ վճիռներ կայացնելիս նա առակներ էր ասում, որոնք վերաբերում էին առօրյա կյանքի տարբեր ոլորտներին: Այդ կարճ, բայց դիպուկ առածները շատ բարձր էին գնահատում նրանք, ովքեր ցանկանում էին իրենց կյանքը ներդաշնակեցնել Աստծու կամքին:

Աստվածաշունչը չի ասում, թե Սողոմոնն է գրել «Առակներ» գիրքը: Այնուամենայնիվ, նշում է, որ նա «խոսեց» առակներ, նաև՝ «նա ամեն ինչ մանրակրկիտ քննում էր, որպեսզի բազում առակներ շարադրի»՝ այդպիսով ցույց տալով, որ թագավորն ուզում էր, որ դրանք պահպանվեին ապագայի համար: Դավթի և Սողոմոնի օրերում պալատական պաշտոնյաների մեջ կային նաև քարտուղարներ, ովքեր և կառավարչի խոսքերը խոր հարգանքով էին ընդունում ու գրի առնում դրանք: Գրքի մեծ մասը, անկասկած, գրվել է Սողոմոնի իշխանության տարիներին (մ.թ.ա.1037–998թթ.): Եբրայերեն Աստվածաշնչում «Առակներ»-ը սկզբում անվանվում էր գրքի առաջին խոսքով՝ միշլեի, որը նշանակում է «առակներ»: Միշլեի բառը եբրայերեն մաշալ գոյականի հոգնակի ձևն է, որը ակներևաբար ծագում է «նման լինել» կամ «համեմատելի լինել» նշանակությունն ունեցող բառի արմատից: Այս ձևակերպումները ճշգրտորեն բնութագրում են գրքի բովանդակությունը, քանի որ առակները սեղմ ասացվածքներ են, որոնք հաճախ նմանություններ կամ համեմատություններ են, և դրանց նպատակը ունկնդրին մտածելու տեղիք տալն է: Սեղմ կառուցվածքը հեշտացնում է առակների ընկալումը, դրանք դարձնում է հետաքրքիր: Բացի այդ, կարճ առակները հեշտ է սովորել ու հիշել: Առակի հիմնական միտքը չի մոռացվում:

Հարցաշար

1. Ի՞նչ գիտես առակի ժանրի մասին, քանի՞ մասից է այն բաղկացած:

Առակը իրենից ներկայացնում է բարոյախրատական ստեղծագործություն, որտեղ քննադատվում են մարդու չար արարքները՝ ազահություն, ժլատություն, չարություն և այլն: Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից:

2. Ի՞նչ առակագիրներ գիտես, համառոտ ներկայացրո՛ւ:

Առաջին առակագիրներից հանդիսանում է Եզրպոսը, իսկ հայ առակագիրներից են՝ Խնկո ապերը, Վարդան Այգեկցին, Մխիթար Գոշը և այլն:

3. Ինչպե՞ս են գրվել ու կազմվել Սողոմոնի «Առակներ»-ը:

Սողոմոնը անձամբ գրի չի առել իր առակները, բայց նա ցանկանում էր որ իր խոսքերը հասնեն մեզ: Այսպիսով նրա ժողովուրդը, քարտուղարները լսելով իր առակները գրի են առել, որպեսզի նրանք հետագայում պահպանվեն:

4. Ընթերցի՞ր առակները և գրի՞ր, թե ո՞րն է յուրաքանչյուրի ասելիքը, գաղափարը:

Առաջին առակը պապու մասին մեզ ցանկանում էր հասկացնել, որ ինչպես վարվես դիմացինի հետ, այդպես էլ քեզ հետ են վարվելու, այսպիսով վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ վարվեն քեզ հետ:

Իսկ երկրորդ առակը՝ երկու մայրերի մասին, պատմում էր մայրական սիրո մասին, մայրը նույնիսկ պատրաստ է իր երեխային տալ ուրիշին, միայն թե նրան ոչինչ չլինի:

5. Ի՞նչ են մեզ սովորեցնում դրանք, դու համամի՞տ ես...մտքի հետ, դու համամիտ չես...մտքի հետ: Ինչո՞ւ:

Հետևյալ առակները մեզ սովորեցնում են կատարել ճիշտ ընտրություն և ճիշտ քայլեր մեր կյանքում, և այդ ես համամիտ եմ առակների մտքերի հետ: Նրանք մեզ ծանոթացնում են կյանքի դժվարությունների հետ և մեկտեղ սովորեցնում մեզ ըստ հետևյալ առակների օրինակների:

<<Երկու կին>>

Մի անգամ դժվար հարցով երկու կին են գալիս Սողոմոնի մոտ: «Մենք երկուսով ապրում ենք նույն հարկի տակ,— բացատրում է նրանցից մեկը,— ես մի որդի ունեցա, իսկ դրանից երկու օր հետո արու զավակ ունեցավ նաև այս կինը: Բայց մի գիշեր նրա որդին մահացավ: Օգտվելով առիթից, որ ես քնած եմ՝ նա իմ կողքից վերցնում է երեխայիս, ու տեղը իր մահացած որդուն դնում:

Երբ ես արթնացա ու նայեցի մեռած երեխային, իսկույն նկատեցի, որ նա իմը չէ»:
Այդ ժամանակ երկրորդ կինն առարկում է. «Ո՛չ, ողջ մանուկը իմն է, իսկ մեռածը՝ նրանը»: Առաջին կինը թե՛ ո՛չ, մեռած մանուկը քոնն է, իսկ կենդանին՝ իմը: Եվ նրանք այսպես վիճում են: Ինչպե՞ս պիտի վարվի Սողոմոնը: Նա հրամայում է մի սուր բերել, ապա ասում է. «Ողջ երեխային երկու կտոր արեք. կեսը տվեք մեկին, մյուս կեսը՝ մյուսին»:

-Ո՛չ,— ծջում է իսկական մայրը:— Խնդրում եմ, մի՛ սպանեք նրան, այլ տվեք այդ կնոջը: -Իսկ մյուս կինն ասում է. «Մանուկը ո՛չ ինձ լինի, ո՛չ էլ քեզ: Կիսե՛ք նրան»:
Վերջապես այստեղ Սողոմոնը միջամտում է. «Մի՛ սպանեք երեխային: Տվեք նրան՝ առաջին կնոջը: Նա է իսկական մայրը»:

Սողոմոնը գլխի է ընկնում, թե ով է իսկական մայրը, քանի որ վերջինս այնքան է սիրում իր զավակին, որ անգամ պատրաստ է նրան տալու ուրիշին, միայն թե երեխան ողջ մնա: Երբ մարդիկ լսում են, թե Սողոմոնն ինչպես լուծեց այդ հարցը, շատ են ուրախանում, որ այդքան իմաստուն թագավոր ունեն:

Սողոմոնի իշխանության տարիներին Աստված իր ժողովրդին օրհնում է բարիքների առատությամբ՝ ցորենով, գարիով, խաղողով, թզով և այլ պտուղներով: Ժողովուրդը լավ է հագնվում և ապրում է հարմարավետ տներում: Բոլորն ապրում են առատության մեջ և ոչ մի բանի կարիք չունեն:

Հարցաշար

➤ Երկու կանայք ի՞նչ դժվարին հարց են ներկայացնում Սողոմոնին:
Երկու կանայք եկել էին Սողոմոնի մոտ և ցանկանում էին հասկանալ, թե հետևյալ երեխան ումն է:

➤ Ինչպես տեսնում ես նկարում, Սողոմոնն ինչպե՞ս է լուծում այդ հարցը:
Սողոմոնը որոշում է կիսել երեխային ,մի կեսը տալ մի կնոջ,մյուս կեսը մյուս կնոջը:

➤ Սողոմոնի իշխանության տարիները ինչի՞ են նմանվում, և ինչո՞ւ, պատմիր համառոտ:

Սողոմոնի իշխանության տարիներին Իսրայելը ծաղկում էր ,ուներևալով Սողոմոն Իմաստունի պես թագավոր Իսրայելի ժողովուրդը ապրում է առատության մեջ,ոչ ոք ոչևչի կարիք չունի,բերքը առատ աճում է ,բոլոր խնդիրները թագավորի կողմից լուծված են և Իսրայելը ծաղկում է:

➤ Ինչպես կմեկնաբանես Սողոմոն իմաստունի որոշումը:

Սողոմոն Իմաստունի որոշումը շատ սրամիտ և խելացի էր, քանզի բնականաբար իրական մայրը պատրաստ էր հրաժարվել երեխայից,միայն թե նրան ոչինչ չլիներ :Եվ այդպես մայրական բնագոյին ազդելով Սողոմոնը գտնում է երեխայի իրակա մորը:

<<Կռիվովի առակները ոչ թե սովորական այլաբանություններ են, այլ բանաստեղծական պատկերներ, փոքրիկ պատմվածքներ, դրամաներ՝ բանաստեղծական ընդգծված կերպարներով >>, - գրել է Բելինսկին: Առակների այս բնորոշումից պարզ երևում է, թե որը կարող է լինել դասավանդման ճիշտ ուղին, որպեսզի չխամրի դրանց գեղարվեստական արժեքը, չխաթարվի գեղագիտական ու դաստիարակչական ազդեցությունը: **(Նկար 1)**

Տարրական դպրոցում, սկսած առաջին դասարանից, ուսուցանվում են ժողովրդական բանահյուսության նմուշներ՝ առած-ասացվածքներ, հեքիաթներ, շուտասելուկներ, սուտասելուկներ և այլն: Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի մայրենիի դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակներն այլաբանորեն, ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն: Առակների միջոցով է, որ կրտսեր դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը (<<Ճայը և սագը>> Մխիթար Գոշ), Աստծո ամենազորությունը (<<Մարդը, ընկույզը և ձմերուկը>> Վարդան Այգեկցի), միասնականության ուժը (<<Անտառն ու քամին>> Հրաչիկ Սևոյան) և այլն: Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են: Շատ ավելի ոյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առաձների, ասացվածքների կիրառմամբ: **(Նկար 2)**

Այսպիսով, առակների դասավանդումը տարրական դասարաններում երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները: Առակների միջոցով զարգանում է նաև աշակերտների ընթերցասիրությունը, կարդալու որակական հատկանիշները: Դասագրքերում ընդգրկված հայ և այլազգի առակագիրների ստեղծագործություններն իրենց պարզ ու մատչելի գրելաճոճով միշտ էլ սիրելի ու հետաքրքիր են հայ փոքրիկ ընթերցողների համար: Ուստի, տեղին է նշել, որ ավելի լավ կլիներ մայրենիի ընթերցարաններում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ դասական գրականության, ինչպես նաև նոր ժամանակների առակների նմուշների ներառմամբ: **(Նկար 3)**

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող եւթյունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը: **(Նկար 4)**

Առակը հայ գրականության մեջ

Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բնավոր ստեղծագործության մեջ: Այն այլաբանական բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է, որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են: Նրանց փոխհարաբերություններն այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքի զանազան խրատական, հաճախ երգիծական բովանդակություն: Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երևում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում քերականության և ճարտասանության հետ աշակերտներին սովորեցնել նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբանների պատրաստելու համար: Ինչ վերաբերում է ժողովրդական առակներին, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ-որ մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես:

Դրա պատճառն այն է, որ առակները եկեղեցականների կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրև գեղջկական, անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Մեծ դժվարությամբ է առակի տեսակը մուտք գործել գրավոր գրականության մեջ: Եվ վերջապես 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին: Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականաբար 2 մաս՝ բուն պատմվածքը և խրատական եզրակացությունը: Պատմվածքը, որ նա շեշտում է

առակ, գաղափար, օրինակ, եղանակ և այլ բառերով, ըստ Մխիթարի լինում է 3 տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Հակառակ Մխիթար Գոշի ժողովածուի, որն ունի կուռ կառուցվածք, առակների դասավորությունը կատարված է որոշակի սկզբունքով, Վարդան Այգեկցու անվան հետ կապված առակագրքերում նյութերը համակարգված դասավորություն չունեն, միմյանց հաջորդող առակները ոչնչով իրար հետ կապված չեն:

Խրատական եզրակացությունը, որ հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն և այլ բառերով, 2 տեսակ է: «Ճշմարտությունը առակների հեղինակի համար երկու բովանդակություն կարող է ունենալ, երկու եռություն՝ աշխարհական և եկեղեցական, ըստ որում նրա նպատակն է «կերպարանել»՝ պատկերացում տալ, բացահայտել, ցուցադրել, արտացոլել այդ երկու ճշմարտություններն այլաբանորեն: Դատաստանագրքում հեղինակը ձգտել է նույն նպատակին հասնել՝ ճշմարտությունը (դարձյալ՝ եկեղեցական և աշխարհական) պարզել օրենսդրական միջոցներով՝ կազմելով դրա համար 2 տիպի օրենքներ»: Եվ քանի որ առակագրի համար էականը «ճշմարտությունն» է, ուստի առակի առասպելն այնպես է հորինվում, որ հարմարվի բարոյակրթական մասին կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ավելիմեծ տեղ է բռնում, քան պատմվածքը: Այսինքն՝ նպատակը ուսուցողական է:

Նույնքան ուշագրավ են Վ. Այգեկցու առակները: Հայտնի է, որ նրա առակների գիտական հետազոտումը կատարել է հայագետ Նիկողայոս Մառն իր «Ժողովածոյք առակաց Վարդանաց» ուսումնասիրության մեջ: Նա գիտականորեն ապացուցում է, որ արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համանուն ժողովածուից Կարևորը և գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում և հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու գրույցներ: Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաև աշխարհականների համար և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով:

Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ:

Ստեղծված լինելով գերազանցապես քաղաքային միջավայրում, առակագրքերի մեջ եղած ստեղծագործություններում արտացոլվել է այդ միջավայրի կյանքն ու կենցաղը: Հակառակ Մխիթար Գոշի ժողովածուի, որն ունի կուռ կառուցվածք, առակների դասավորությունը կատարված է որոշակի սկզբունքով, Վարդան Այգեկցու անվան հետ կապված առակագրքերում նյութերը համակարգված դասավորություն չունեն, միմյանց հաջորդող առակները ոչնչով իրար հետ կապված չեն: Նրանցից յուրաքանչյուրը ունի ինքնուրույն սյուժե, անկախ գաղափար, ուրույն նպատակադրում, տարբեր գործող անձեր: Ժանրային առանձնահատկությունների տեսակետից նույնպես առակագրքերում տեղ գտած ստեղծագործությունները

միատարր չեն: Այստեղ կարելի է գտնել նաև զանազան հետաքրքրաշարժ պատմություններ, գրույցներ («Գինի», «Կաթ մի մեղր պատճառ պատերազմի», «Ջնարք սատանայի», «Տանպատեցի ջուլիակ» և այլն), մանրապատում պատմվածքներ («Միամիտ գողը», «Լեզուանի կին», «Ջկներագետ ճուղի» և ուրիշներ) և նույնիսկ մանրավեպեր, թեև իրենց ժանրային ձևավորումը վերջնականապես չստացած, ինչպես, օրինակ, «Պղպղայն»: Այս և նման այլ մանրավեպեր («Ձուկն, թե կատու», «Արուեստ կնոջ» և այլն), որոնք ունեն երգիծական երանգ, անդրադարձնում են, սովորաբար, մեծանուն քաղաքացիների ընտանեկան փոխհարաբերությունները: Բիչ չեն այն առակներն ու զավեշտական պատմությունները, որոնք ստեղծված են զվարճասեր հասարակայնության պահանջները բավարարելու համար: Դրանցից են՝ «Միմոս Չիս վաճառական», «Ճոհի», «Աղուես և պանրացան մարդ», «Գայլ յուսումըն», «Այր որոյ չէ տեսեալ ոչ բաղանիս և ոչ խոզ», «Տանուտեր և որդին», «Չայր և որդի», «Երեց ասորի և երիտասարդ հայ» և շատ ուրիշներ:

Չնայած այս առակների ու պատմությունների կատակային բնույթին, այնուամենայնիվ, դրանք ևս զգալի ճանաչողական արժեք ունեն: Առակների գործող անձերը մարդիկ են՝ իրենց ծաղրվող թերություններով ու դրվատվող առաքինություններով, և կամ կենդանիներ, թռչուններ և այլն: Այս վերջին դեպքում մարդկային հասարակությունը իր արտացոլումն է գտնում կենդանական աշխարհում այլաբանորեն, այսինքն կենդանիների հարաբերությունները հոմոմորֆ ձևով վերարտադրում են մարդկային հարաբերություններ, կերպարների հարաբերակցությունը նման է նախատիպերի ու բնօրինակների առնչությանը, ինչ որ հատուկ է առհասարակ առակագրությանը: Առակներից շատերի գլխավոր գործող անձը աղվեսն է. այս է պատճառը, որ Վարդանի անվան հետ կապված առակագրքերը ստացել են նաև «Աղվեսագիրք» անվանումը: Չայկական առակներում աղվեսը միշտ չէ, որ կերպավորվում է իր համբավին (խորամանկություն) համապատասխան, այլև օժտված է բավական բազմազան գծերով, մեկ նա անմիտ է, հիմար, դյուրահավատ, երբեմն սրամիտ, փորձառու, զգաստ և համբերող է, երբեմն էլ ուխտադրուժ ու նենգավոր: Ինչպես աղվեսը, այնպես էլ մյուս կենդանիները առակներում առնված են ոչ միայն իրենց բնորոշ հատկանիշներով, այլև հաճախ հանդես են գալիս վարքի, վարմունքի տարբեր, բայց նույնպես իրենց համար բնութագրական այլ կողմերով: Բոլոր դեպքերում նրանք այլաբանորեն անձնավորված են, ընթերցողը ի դեմս նրանց տեսնում է մարդկանց, նրանց հատկանիշների մեջ մարդկային հատկանիշներ, հարաբերությունների մեջ մարդկային հարաբերություններ:

Լավագույնները այն առակներն են, որոնք առակագրքերի մեջ են մտել ժողովրդական բանահյուսությունից: Դրանց պատմողական մասը առավելագույն չափով հակիրճ է, ամփոփ ու հստակ և լիովին հաղորդում է առակախոսի միտքը, միտումը, հուշում գաղափարը, այնպես որ ավելորդ է դառնում մեկնությունը: Եվ իրոք, ժողովածուների առակներից շատերը մեկնողական մաս չունեն և դրանց կարիքը չի էլ զգացվում, ինչպես «Աղուես և գայլ» առակում: Կան առակներ էլ, որոնց մեկնությունները չեն համապատասխանում պատումի բովանդակությանը, չեն բխում նրանից: Դրա պատճառն այն է, որ առակագրքեր կազմող հոգևոր գործիչները կամ խրատների համար առակներ օգտագործող քարոզիչները առակները քաղելով ժողովրդից՝ աշխատել են միաժամանակ հեռանալ պատումի բովանդակությունից և իբրև մեկնություն դնել կրոնական խրատ-բանաձևումներ: Վարդան Այգեկցու

անունով տարածում գտած ժողովածուները, որոնք ժամանակի ընթացքում ճոխացել են ժողովրդական բանավեպերից առնված նյութերով, մատչելի ձևով հոգևոր սնունդ են տվել միջնադարյան ընթերցողին և ունկնդրին: Նրանց մեջ տեղ գտած առակները, զվարճալի պատմությունները, մանրավեպերը, խրատական պատումների արվեստի տեսակետից միջին դարերի հայ գեղարվեստական արձակի մարգարիտներն են, միաժամանակ դրանք կարևոր աղբյուր են ժամանակի կյանքի բազմաթիվ այնպիսի կողմերի լուսաբանման համար, որոնց մասին լռում են մատենագրական մյուս հուշարձանները:

Առակագրությունը որպես ժանր

Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երևում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Ինչ վերաբերում է ժողովրդական առակներին, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ-որ մեր հին ժողովրդական բանահյուսությունն

ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ առակները եկեղեցականների կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրև գեղջկական, ուստի անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Չանագան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են «հաւահմայք», «հացահմայք», «հատահարցք», մերժված և հաղորդության անարժան են համարել նաև «գբախաւք, գրատեք, շրջողք տանէ ի տուն, հետաքրքիրք, զրուցատարք, առասպելախաւք»: Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն «առասպել» բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ: Մեծ դժվարությամբ առակը մուտք է գործում գրավոր գրականության մեջ: Եվ վերջապես 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին: Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականաբար 2 մաս՝ բուն պատմվածքը և խրատական եզրակացությունը: Պատմվածքը, որ նա շեշտում է առակ, գաղափար, օրինակ, եղանակ և այլ բառերով, ըստ Գոշի լինում է 3 տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Խրատական եզրակացությունը, որ հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն և այլ բառերով, 2 տեսակ է: «Ճշմարտությունը առակների հեղինակի համար երկու բովանդակություն կարող է ունենալ, երկու էություն՝ աշխարհական և եկեղեցական, ըստ որում նրա նպատակն է «կերպարանել»՝ պատկերացում տալ,

բացահայտել, ցուցադրել, արտացոլել այդ երկու ճշմարտություններն այլաբանորեն: Դատաստանագրքում հեղինակը ձգտել է նույն նպատակին հասնել՝ ճշմարտությունը (դարձյալ՝ եկեղեցական և աշխարհական) պարզել օրենսդրական միջոցներով՝ կազմելով դրա համար 2 տիպի օրենքներ»: Եվ քանի որ առակագրի համար էականը «ճշմարտությունն» է, ուստի առակի առասպելն այնպես է հորինվում, որ հարմարվի բարոյակրթական մասին կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն

նույնիսկ խրատական մասն ավելիմեծ տեղ է բռնում, քան պատմվածքը: Այսինքն՝ նպատակը ուսուցողական է: Նույնքան ուշագրավ են Վ. Այգեկցու առակները: Հայտնի է, որ նրա առակների գիտական հետազոտումը կատարել է հայագետ Նիկողայոս Մառն իր «Ժողովածոյք առակաց Վարդանաց» ուսումնասիրության մեջ: Նա գիտականորեն ապացուցում է, որ արաբերեն «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերեն համանուն ժողովածուից: Կարևորը և գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում և հետո ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ ու գրույցներ: Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաև աշխարհականների համար և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով: Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ, ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը: Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակվում են մնալ որպես գրական տեսակ:

Հոգևորականներ

Վարդան Այգեկցու քարոզներում երևում են սոցիալական ներհակությունները, նույնը առկա է և նրա առակներում: Սակայն հետագա ժողովածուներում ներառված առակներում արդեն սոցիալական հարցերը արծարծվում են ավելի ցայտուն և բացահայտ, նրանց մեջ երևում է հասարակական կյանքի պատկերը դրսևորված բավական բազմակողմանիորեն: Փոխված է հայացքը ազնվականի ու իշխանի, այլև հոգևոր առաջնորդների նկատմամբ, և նրանց քննադատությունը այլևս զգուշավոր չէ, այլ ուղղակի և խիստ: Առակներում սուր ծաղրի է ենթարկված նաև հոգևորականությունը. հոգևոր դասի շատ ներկայացուցիչներ որովայնամոլ են, ազահ ու ընչաքաղց: Հոգևոր դասի ներկայացուցիչներից շատերը զերծ չեն փառասիրության և նույնիսկ շնության ախտերից: Առակներից մեկում միայնակեցը սատանայի հետ ուխտ է կապում, որ սատանան իրեն մեծության հասցնի («Ուխտ միայնակեցի ընդ սատանայի»), մի ուրիշում («Միայնակեաց և գամբռ շուն») միայնակեցը շնանում է, աստծուց չքաշվելով, իսկ գամբռ շունը նրան սարսափեցնում է և ետ կանգնեցնում շնության ախտից: Հայկական միջնադարյան առակներում, ավելի քան մատենագրության որևէ այլ տեսակում, պարզորոշ արտահայտված են հասարակական կյանքում և մտածողության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Այդ փոփոխությունների շատ ավելի խորացած դրսևորումների արտացոլումներ ենք տեսնում Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակների համեմատությամբ՝ առակագրքերի հետագա շերտերի, մանավանդ ժողովրդական ծագումի առակներում: Եթե Մխիթար Գոշի առակներում լոկ անգետ մի հովիվ է

փախչում գատկի տոնին հաղորդվելուց, ասելով թե՛ «Ոչ ճաշ է զի կերայց և ոչ հրամենք», ապա այստեղ արդեն մարդիկ ընդհանրապես անտարբեր ու սառն են եկեղեցու նկատմամբ, ժամ չեն գնում և զվարճալի տեսարանները գերադասում են

սաղմուսից ու աղոթքից: Ավելին՝ ժամանակներն այնքան են փոխվել, որ արդեն կասկածի տակ են առնվում քրիստոնեական վարդապետության բուն հիմքերը և ավետարանի քարոզած գաղափարների ու իրականության մեջ տեսնում են անհարիրություն («Միայնակեաց և տաճիկ իշխան», ուր սրամտորեն ու նուրբ ծաղրի է ենթարկված Քրիստոսի «ձրի առեք և ձրի տուէք» բանաձևը), առհասարակ թերահավատ են ավետարանի պատգամների նկատմամբ, այլև սուտ են համարում նրա մեջ գրվածները:

Իրենց պարզությամբ, բնականությամբ և գեղեցկությամբ առանձնանում են հատկապես Քրիստոսի առակները, որոնք Հիսուսը պատմում է անմիջապես կյանքից վերցրած օրինակներով, շնորհիվ որի ներկայացվում քրիստոնեական վարդապետության խորին խորհուրդները: **(Նկար 5)**

Առակների խրատական, դաստիարակչական նշանակությունը անձի զարգացման գործում

Առակները ուսուցանող, դաստիարակող, խրատող ոչ ծավալուն ստեղծագործություններ են, որոնք արտահայտված են փոխաբերական իմաստով: Առակի վերջին տողում տրվում է բացատրություն, թե ինչ է խրատում և սովորեցնում առակը: **(Հավելված 6)**

Առակը խրատի միջոց.

Նախ՝ երեխային սիրել, հետո՝ խրատել, ուսուցանել:

- ✓ Սիրել բոլոր երեխաներին:
- ✓ Երեխային ընդունել այնպիսին ինչպիսին ինքը կա:
- ✓ Ընդունել երեխայի սխալվելու իրավունքը:
- ✓ Օգնել երեխային՝ գործել ինքնուրույն:
- ✓ Խրատել՝ չվիրավորելով նրա անձը:
- ✓ Խրատել առակների լեզվով:
- ✓ Խրատել բարոյական բնույթի առակներով, ճանաչել նրա անձը և կատարելագործել:

Այս խորագրի ընտրությամբ առաջին հերթին կարևորում եմ մանկավարժի մասնագիտական դերակատարումը՝ «<Ուսուցիչ>> որակավորման բարձրացման համակարգում: Այսօր դպրոցներում սովորողների մի սովոր հատվածի անտարբերությունն ուսման նկատմամբ և, ինչու չէ, նաև աստիճանաբար ավելի շատ աշակերտական զանգվածներ ընդգրկող բացասական վերաբերմունքը լրջորեն անհանգստացնուն են բոլորին: Այս մտահոգիչ երևույթի պատճառները և՛ սոցիալական են, և՛ մանկավարժական: Մենք՝ մանկավարժներս, հիմնականում պետք է զբաղվենք մանկավարժական բնույթի պատճառների բացահայտմամբ և ըստ այդմ՝ գտնենք դրանցից ազատվելու ուղիներ: Իմ կարծիքով լավագույն ուղիներից մեկն էլ կարող է հանդիսանալ «<Առակը>>: Բարոյական բնույթի առակների միջոցով մենք կարող ենք խրատել, դաստիարակել երեխաներին՝ չվիրավորելով նրա անձը: Առակը՝ պայմանավորված ժողովրդական ծագմամբ և

աշխարհիկ կյանքից վերցված պատմություններով, ինչպես նաև հոգևոր-բարոյական ու այլաբանական բացատրություններով, յուրօրինակ կապող օղակ է դառնում մարդկային բարձր որակների և բարոյական արժեքների ձևավորման համար:

Բարոյական առակներն անմիջականորեն վերցված են կյանքից, հիմնված են կյանքի այս կամ այն երևույթի ու հատկանիշների վրա: Իրենց պարզությամբ, բնականությամբ առակները, որպես խրատող լավագույն միջոց են հանդիսացել միջնադարից մինչև մեր օրերը: Առակները բոլոր ժամանակներում սիրելի են եղել փոքրերին և մեծերին: Մինչ օրս մենք մեր գրավոր և բանավոր խոսքում օգտագործում ենք առակներից վերցված արտահայտություններ, որոնք էլ խոսքը դարձնում են դիպուկ, խրատող և դաստիարակող: Իմ կարծիքով առակների գլխավոր յուրահատկությունն այն է, որ նրանք խարսխված լինելով համամարդկային արժեքների վրա և ծաղրելով այն ամենը, ինչ մերժելի է, երբեք չեն հնանում: Նմանատիպ օրինակներ են Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու առակները, որոնք այսօր ևս չեն կորցրել իրենց այժմեականությունը, ընթերցողներին ուսուցանելով հեռու մտալ մեծամտությունից, ազահությունից, չարությունից, ընչաքաղցությունից, նախանձից, անտարբերությունից և մնացյալ բոլոր այն արատներից, որոնք մարդու առջև փակում են դեպի բարին և վեհը տանող ճանապարհները:

Ուստի յուրաքանչյուր ուսուցիչ իր առջև պետք է նպատակ դնի երեխաներին խրատել առակներով և վստահ կարող եմ ասել, որ անպայման հաջողությունների կհասնի:

ԱՌԱՎԻ ՔԱՐՏԵԶ

ՎԵՐՆԱԳԻՐ

ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐ

ՓԱՍՏԵՐ

ԱՅԼ ՀԵՐՈՍՆԵՐ

ՄԻՉԱՎԱՅՐ

Որտե՞ղ _____
Ե՞րբ _____
Ինչի՞ համար _____
Ի՞նչ եղավ _____

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՍԿԻԶԲ

ԸՆԹԱՑՔ

ԱՎԱՐՏ

ԽՐԱՏ

Ի՞նչ է սովորեցնում առակը:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով կարող եմ ասել, որ առակների ուսուցումը շատ կարևոր է դպրոցականի համար, քանի որ առակներից կարելի է պատկերացում ստանալ միմյանց հարևանությամբ (հաճախ նույն քաղաքում) ապրող ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների մասին:


Առակների ուսուցումը կարևոր նշանակություն ունի անձի ձևավորման, զարգացման, կայացման և սոցիալականացման հետագա գործընթացում: Աստվածաշնչյան առակները իրենց դաստիարակչական ազդեցությունն են թողնում ընթերցողի, ունկնդրի վրա: Դրանք նպաստում են սովորողի ուսումնական գործընթացի զարգացմանը և գիտելիքների ձևավորմանը:

Աստվածաշնչյան առակների ուսուցումը նպաստում է սովորողների արժեհամակարգի ձևավորմանը՝ դառնալով աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկը:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006
2. Ղևոնդ Ալիշան, Յաղագս իսկազիր և նախագաղափար օրինակի Գրոցն դաստաստանի Մխիթարայ Գօշի,- «Բազմավէպ», 1848, էջ 117-122:
3. Մ. Աբեղյան, Երկեր Դ, Երևան, 1966
4. Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ, Երևան, 1958
5. Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 9, Երևան 2012
6. Լ. Թորգոմյան, Մանկավարժության արժեքանության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Եր., <<Ան-Ջոն>> հրատ., 2011:
7. Հայոց լեզու ,գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Եր., Անտարես, 2006:
8. http://www.tarntercum.ru/2015/07/blog-post_13.html
9. Վիքիպեդիա
10. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան 1967
11. Էմ. Պիվազյան, Վարդան Այգեկցի: Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն
12. Պ. Հակոբյան, Առակների տեսությունը միջնադարյան Հայաստանում
13. <https://old-lib.amedu.am/resource/10710>

ՀԱՎԵԼՎԱԾ



Նկար 1




Նկար 2




Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6